ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

ԳՈՇԱՎԱՆՔԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ :ՉԹ: (1260) Թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԹՈՌԱՀԱՐԿԸ

*Նոր Գետիկի կամ Գոշավանքի Ս. Աստուածածին եկեղեցու ներքուստ հիւսիսային մուտքի ճակատակալ քարի 9 տողանոց բնագրի համաձայն՝ :ՉԹ: (1260) թ. Յովհաննէս Արմանեցին[1], որ բնականաբար, ամբողջ թեմի թեմակալ եպիսկոպոսն էր[2], Գետկայ վանքի վարդապետ, պատմագիր Կիրակոս Գանձակեցու խնդրանքով, ակներեւաբար, վանքի վանահայրութեան՝ «**ի հայրութեան** Աբռամ վարդապետի»[3], վերացրել է գիւղի՝ եպիսկոպոսական աթոռին տրուող հարկը՝ իշխանուհի **Գոնցա խաթունի** իշխանութեան օրօք, զանց առնելով աթոռին տրուող հարկատեսակի անուանումը. «Աստծով ես տր Յովանէս Արմանեցի **ազատ գերցի** զ Գետկա ժողովուրդս ի հարկէ, որ **տային յաթոռն,***

---

[1] **Արմանա**, **Արման**, (ի, ու)- Հնագոյն երկիր Հայկակ. լեռնաշխար.: Գիւղ Արմ. Հայաստ. Էրզրումի նահի Բասենի գաւ-ում: Ա Արմ. Հայաստ. Բաբերդ f-ից հս.-արմ.: **Հ. Մանանդեանը** եւ **Մարկվարտը** Ա նոյնացնում են Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Բագրեւանդ գաւ-ի **Արմանա** գ-ի հետ, որը հաւանական է թում: **Արմանի**-գիւղ Մեծ Հայքի Այրարատ աշխ.-ի Շիրակ գաւ-ում: (Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, **Թ. Ծ. Յակոբեան**, **Ստ. Տ. Մելիք-Բախշեան**, **Հ. Խ. Բարսեղեան**, հ, 1, Երեւան, 1986, էջ 465): Հաւանական է՝ Յովհաննէս Արմանեցի եպիսկոպոսը ծագմամբ Շիրակցի է: Հր. Աճառեանը խօսելով նշեալ բնագրի մասին յայտնում է. «Յովհաննէս, Գետկայ ժողովուրդը ազատել է հարկից եւ այդ բանը արձանագրում է Գոշավանքի մի արձանագրութեան մէջ, 1211 թ.: (Թուականը ճիշտ չէ, **Ռ. Գ.**), «Ազգագր, հանդէս, Ժ, 24», **Հր. Աճառեան**, Հայերէն անձնանունների բառարան, Երեւան, 1946, հ., Գ, էջ 578: Ակներեւաբար Արմանեցու անունը շօշափում է Դեղձուտի վանքի ՉԻԳ (1274) թ. բնագրում. «յաշխարհակալութե Աբաղա ղանին և յիշխանութե ամիրսպասալար աթաբակ Սադունին, ես Առաքելս ..յերկրէն Կիլիկիո, ի գաւառէն Տարսոնի.. շինեցաք զէկեղեցիս .. և զգաւիթս և կանգնեցաք Սբ Նշանս. **.արքէպիսկոպոսութե Հաղբատա տր Յովանեսի**, որ է հեզ և մարդասէր»: Դիւան հայ վիմագրութեան, պրակ, VI, կզմ. **Ս. Ա. Աւագեան**, **Հռ. Մ. Ջանփոլադեան**, Երեւան, 1977, էջ 112: Անուանի վիմագրագէտ Ս. Բարխուդարեանի վերծանութիւնը մի փոքր տարբերւում է վերոնշուած բնագրից, թուականը կարդացել է ՈԻԴ, սակայն մեզ հետաքրքրող հատուածը համընկնում է վերոնշեալ բնագրին. «եղեւ ձեռնտու մխիթար կենաց մերոց արքիպիսկոպոսութե Հաղբատա տր Յովանեսի, որ է հեզ և մարդասէր և մեր յոյս այս. շինեցաք զէկեղեցիս ամենայն պատրաստութեամբ և զգաւիթս»: Հաղբատի արքեպիսկոպոս Տր Յովանէսի մասին գիտնականը նշում է, որ վերջինս «Հաղբատի առաջնորդ Տէր Յովհաննէս Դ. նստել է 1257 թ. եւ նրա յիշատակութիւնները հասնում են նոյնպէս մինչեւ 1280 թ.», **Ս. Բարխուդարեան**, Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Երեւան 1963, էջ 144:

[2] Անուանի հնագէտ-վիմագրագէտ Կ. Ղաֆադարեանի հաւաստմամբ, Հաղպատի եղծուած **կարեւորագոյն** անթուակիր բնագիրը փորագրուել է 1110 թ. եւ յիշատակութեան տեղեկութեամբ միաբանութիւնն ազատուել է հարկերից: Վիմագիրը փաստում է, որ վանքում վերահաստատուել է եպիսկոպոսական աթոռ, Վրաց թագաւոր Դաւիթ (4) Շինարարի կողմից. «Ի ժամանակս ինքնակալ արքային Դաւթի թագաւորին յաղթողի, որդոյ Գեորգեա, որդւոյ թագաւորին Բագրատա ..եղբայրութեանն ազատեաց գրով»: Այդ կապակցութեամբ վիմագրագէտն իրաւամբ նշում է, որ վանքում պէտք է լինէր նաեւ արքայական հրովարտակ: **Կ. Ղաֆադարեան**, **Հաղբատ**, ճարտարապետական կառուցուածքները եւ վիմական արձանագրութիւնները, Երեւան, 1963, էջ 144: Սակայն մինչ այդ եպիսկոպոսական «**ի մեծ աթոռն**» 979 թ. հաստատուել էր Սանահնի սրբավայրում՝ արքայական հրովարտակով թագաւոր Բագրատունի Սմբատ Բ.-ի (Տիեզերակալ) կողմից՝ շնորհելով վանքին ընդարձակ վիճակ «..զամենայն երկիրն Տաշրաց.. մինչ ի լեառն Բազում.. մինչ ի սահմանս Գուգարաց աշխարհին և մինչ սահմանս Տփխեաց և Վրաց, և ի սահմանս Նիգ գաւառի մինչ ի սահմանս Կայենոյ և զսահմանս Ծաղկոցաց, մինչ ի սահմանս տան Շիրակայ», («Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քեօթուկը)», աշխ.՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 67. Տե՛ս նաեւ Յիշատակարանք ձեռագրաց, էջ 135-136):

[3] Դիւան հայ վիմագրութեան, պրակ, VI, էջ 82: Վարանում ենք սրբագրել անուանի լեզուաբան-վիմագրագէտի վերծանութեանը. (եթէ այն տեխնիկական վրիպակ չէ), ապա, հաւանական է **Աբրահամ** անունն է յապաւուած, քանի որ Կիրակոս Գանձակեցին նկարագրում է մինչ Արմանեցին յաջորդող վանահայրերին՝ նշելով նաեւ **Աբրահամ Վարդապետ** անունը: (**Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատ. Կ. Ա. Մելիք Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 223):

յիշխանութե Գոնցա խաթունին, ի խնդրո Կիրակոս վարդապետին, ի հայրութեան Աբռամ վարդապետի.. գրեցաւ.. :ՉԹ: (1260) թիւս վկայութեամբ Յովհանիսի, «Վարդան վարդապետի»[4]: Ինչպէս նկատելի է շատ կողմերով հետաքրքիր խնդրոյ ***բնագիրը*** *փաստում է, որ Գետիկ գիւղի բնակիչներից (****ժողովուրդս****) եպիսկոպոսական աթոռի օգտին գանձուող հարկը վերացուել է՝ Կիրակոս վարդապետի խնդրանքով՝ (պատմիչ Կիրակոս Գանձակեցի,* ***Ռ. Գ.****) Հաղպատի թեմի հոգեւոր պետ՝ Յովհաննէս արմանեցու կողմից, ցաւօք, չմասնաւորեցնելով վերացուող հարկատեսակի ինչպիսին լինելը:*

Յովհաննէս Արմանեցին 1256 թ., պատմիչ Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ՝ եպիսկոպոս օծուելով Հաղարծնում՝ տեղափոխուել է Նոր Գետիկի մենաստան, փոխարինելով «ոմն Մխիթար» վանահօրը, որը նախորդել էր բաւական երկար առաջնորդ եղած՝ «ամս քսան» եւ ***կամաւորաբար*** *վանահօր պաշտօնից հեռացած, Մարտիրոս առաջնորդին[5]: Պատմիչի վկայութեամբ, Յովհաննէս Արմանեցին ակներեւաբար, մինչ տեղափոխուելը, Հաղարծինի հոգեւոր հաստատութիւնում կառուցել է վեհատեսիլ «երեւելի՝ սրբատաշ վիմօք» Սեղանատունը. «...Եւ ապա տէր Յովհաննէս Արմանեցին, որ և Հաղարծնին էր առաջնորդ, և ձեռնադրվեցաւ եպիսկոպոս յեօթնհարիւր հինգ թուականին: Սա շինեաց ի Հաղարծինն զսեղանատունն երևելի՝ սրբատաշ վիմօք..»[6]: Այդ ընթացքում, նա Խաչատուր Վարդապետի եւ վերջինիս եղբօր՝ Բարսեղի հետ կառուցել են («յեօթնհարիւր երեք թուին (1254 թ.)») նաեւ եկեղեցի «մի երեքխորանի, հանդէպ վանիցն, գմբեթաւոր, յանուն սրբոյն Գէորգեայ»[7], որից յետոյ Արմանեցին՝ «ապա գնաց ի մեծ աթոռն Հաղբատ»[8], դառնալով ողջ թեմի առաջնորդ:*

Ուշագրաւն ու զարմանալին այն է, որ Յովհաննէս Արմանեցու անունը չի յիշատակւում Հաղպատավանքի առաջնորդների անուանացանկում, սակայն մեզ թւում է, որ Յովհաննէսների անուանացանկում 1260-ական թթ. պէտք է լինի նաեւ Արմանեցին:

Հայրապետական (եպիսկոպոսական) աթոռին տրուելիք հիմնական պտղի[9] (պըտուղ[10]) չափերն որոշակի ներկայացւում են Աղվենից ժողովի կանոնական օրինակացման ***Դ*** *յօդուածում, ինչն ուսումնասիրողների կարծիքով, ակներեւաբար հաւաստում է պտղի կամ տասանորդ հարկի վիճակը բովանդակ հայ իրականութեան մէջ: Ժողովի աչք զարնող դրոյթները յայտնում են, որ «Պտուղ ի ժողովրդոց երիցուն՝ կարգ այս լինի. թուանիկն* ***Դ*** *գրիւ ցորեան և* ***Զ*** *գրիւ գարի և* ***ԺԶ փաս քաղցու****, և որ տառապեալն իցէ՝ հացիդ զկէսն տացէ և գինի որչափ և կարող իցէ: Իսկ որոյ վար և այգի չէ մի առցէն: Եւ ոյր ոչխար է* ***ի տանէ մի*** *և* ***Գ գղաթ բուրդ, մի պանիր*** *և ոյր* ***ձիք*** *ի տան իցէ* ***մի յովանակ****, և ոյր պախրէք իցեն՝ որթ մի»[11]:*

---

[4] Դիւան հայ վիմագրութեան, պրակ, VI, էջ 82:

[5] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 223:

[6] Նոյն տեղում:

[7] Նոյն տեղում:

[8] Նոյն տեղում:

[9] Դաւիթ Ալավկա որդի, «Դատաստանագիրքի» այն հատուածից, որտեղ նշւում, թէ «յամենայն աւարէ, որ բերիցեն յայլազգաց և յամենայն ստացուածոց .. յաշխատութենէ **վաստակոց տասանորդս տայ** ի **տան տեառն**» իրաւամբ Բ. Առաքելեանն եզրակացնում է, որ եկեղեցուն տրուող պտղին՝ **գիւղատնտեսական բերքի մէկ տասներորդը**: Հեղինակը յաւելում է, որ վերջինիս տրւում է նաեւ արհեստաւորների ձեռքի գործը եւ վաստակի տասանորդը: (**Բ. Առաքելեան**, Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ, 2, Երեւան, 1964, էջ 222, այսուհետ՝ Քաղաքներ):

[10] Այն կազմում էր բերքի 1/10-ը, որի պատճառով կոչւում էր նաեւ տասանորդ: Նոյն տեղում, էջ 221:

[11] «Կանոնագիրք Հայոց», հ. Բ, աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, Երեւան, 1971, էջ 94:

Եպիսկոպոսական աթոռին տրուելիք պտղին կամ պտուղը, արտայայտւում էր տուեալ գաւառում արտադրուող հողագործութեան հիմնական բնամթերքով, որպիսին ակնյայտօրէն սահմանւում, օրինականացւում են Ամբերդի նորակառոյց տաճարի եւ նորահաստատ ***հայրապետական*** *(իմա՝ եպիսկոպոսական) աթոռի («****շինեցի զկաթողիկես աթոռ հայրապետական****»)*[12] ***ՆՀԵ*** *(1026) թ. վիմական-բնագրում. «Ամին ՆՀԵ ես իշխանս Վահրամ շ[ի]նեցի զկաթողիկես աթոռ հայրապետական*[13] *և սահմանեցի պտուղ Նիգի՝ տունն*[14] *։Բ։ կապիճ ց[ո]ր[եան], յԱրագածոտնե յէգին ։Բ։ փասգի, ի Քաղքոդաշտի*[15] *բաբակն ։Ժ։ լիտր։ Յէրէցն ։Ա։ դ[ա]հ[եկան] յիւրոյ և ի կնոչէ՝ ։Գ։ դ[ա]հ[եկան] հողադր[ամ]։ Ձեռնադրելէ ։Դ։, ՅԱնբերդի պտուղ ի տունն ։Դ։ կապիճ ց[ո]ր[եան], ։Ա։ կտաւահատ։ Այլ տաք զջաղացն վերա կարմնճին։ Ի պսակի ։Գ։ դ[ա]հ[եկան], հողադր[ամ], կնքադր[ամ], տնաւրհնէք։ Ժողովուրդ, որ ոչ կատարէ պատժե[ս]ցի յաստուծոյ։ Իշխան, որ տիրէն, հակառ կա դատի ԱՅ»*[16]*։ Նկատելի է, որ տաճարը կառուցող եւ աթոռը հիմնադրող իշխանաց իշխան Վահրամ Պահլաւունին Անբերդի ՆՀԵ բնագրով՝ սահմանում է աթոռի օգտին գանձուող տուրքերի հասոյթների չափերը, կանոնակարգում աթոռին ենթակայ թեմերի եկեղեցական արարողութիւնների դիմաց բնակչութիւնից գանձուելիք գումարների քանակը, եկեղեցական արարողութիւնների՝ պսակի, հողադրամի, կնքադրամ, տնօրհնէքի, ձեռնադրուելու գումարայի քանակային դրամական արժէքը։*

Եկեղեցական պտուղ կամ պտղի հասոյթը սահմանելու եւ նրա չափերը որոշելու մասին մատենագրական առաջին տեղեկութիւնը «Սրբոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի գիր աւանդութեան։ Յաղագս կարգի սպասաւորաց սրբոյ եկեղեցոյ և պտղոցն ժո-

---

[12] **Ս. Աւագեան**, Վահրամ Պահլաւունու 1026 թ. արձանագրութիւնն Անբերդում եւ եկեղեցական պտղին միջնադարեան Հայաստանում, Վիմական պրպտումներ, Երեւան, 1986, էջ 49։

[13] Ամբերդի եպիսկոպոսանիստը, ինչպէս երեւում է գոյատեւել է XIII դ. 40-ական թթ. սկիզբը, քանի որ Յովհաննավանքի ։ՈՂԲ։ (1243) թ. բնագիրը յայտնում է, որ Ամենայն հայոց կաթողիկոս Կոստանդին Ա. Բարձրբերդցու (1221-1267) կոնդակով՝ «**Սիաբանեցա սբ ուխտիս**» եւ իշխանութեան Զաքարիայի՝ Շահնշահի որդու, **նահանգիս Քրդին**, **որդո Վաչէի**՝ Սբ. Կարապետ վանքին շնորհուել է «**սեփական վիճակ**», եպիսկոպոսական **աթոռ**. «Շնորհիւ բարերարին ԱՅ. Տր Կոստընդին կաթողիկոս հայոց ի թուի ։ՈՂԲ։ (1243) յիշխանութեն [Շահանշահի որդո Զաքարիահ և մերո նահանգիս Քրդին, որդո Վաչէի.. ետու երկիրս սեփական վիճակ Սբ Կարապետիս յԱպարանուց ընդ որ բաժանի գետն Քասաղ մինչ յԱշնակ», (**Կ. Ղաֆադարեան**, Յովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները, Երեւան, 1948, էջ 95)։

[14] Գաւառում։

[15] Վաղարշապատի։

[16] «Սիոն», 1936, թիւ 12, էջ 372-375, «Էջմիածին», 1961, թիւ 5, էջ 45-56. **Н. Токарский**, По страницам истории армянской архитектуры, Ереван, 1973 էջ 15 43. **Ս. Յարութիւնեան**, Անբերդ, Երեւան, 1977, էջ 55. **Ս. Աւագեան**, նշ. աշխ., էջ 45։ Ամբերդի նշեալ բնագրի առիթով ուշագրաւ դիտողութիւն է արել Կ. Մաթեւոսեանը նկատելով՝ պետական, հասարակական տաղանդաշատ գործիչ, զօրահրամանատար Վահրամ Պահլաւունին միաժամանակ կառուցելով Ամբերդի՝ ՆՀԵ (1026) եւ Մարմաշէնի՝ ՆՀԸ (1029) թթ. ճարտարապետական նշանաւոր տաճարները, որոնց որմերին փորագրած մեծածաւալ վաւերագիր-բնագրերում՝ անուանի զօրապետն անտեսել է ժամանակի քաղաքական եւ հասարակական ակնառու գործիչ, Հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձի անձը, իրաւամբ մտորելով, որ վերջիններս միմեանց նկատմամբ լարուած, լուրջ «յարաբերութիւններ» են ունեցել։ (**Կ. Մաթեւոսեան**, Անիի ազնուականութեան պատմութիւնից կամ երեք Գրիգոր Մագիստրոսներ, «Մուղնի», Երեւան, 2015, էջ 49)։ Միանշանակ համոզիչ եւ ընդունելի է Կ. Մաթեւոսեանի վարկածը, թէ՛ Ամբերդի եւ թէ՛ Մարմաշէնի վիմագրերում, բացակայում է ժամանակի Հայոց կաթողիկոս Պետրոս Ա.-ի անունը։ Սակայն նկատելի է, որ մի փոքր այլ երանգաւորում ունի Կ. Կոստանեանի դիտողութիւնը, որ Հայոց կաթողիկոսը, քաղաքական գործունէութեամբ զբաղուելիս ձեռք էր բերել մեծ ազդեցութիւն, որի ներկայութեամբ «կատարելապէս նսեմանում էին **թագաւորի** եւ **իշխանների շուքը**»։ (**Կ. Կոստանեան**, Տէր Պետրոս Ա., Վաղարշապատ, էջ 17)։ Ակներեւաբար, Հայոց կաթողիկոսը աչքի է ընկել ոչ միայն իր արծաթասիրութեամբ, փառամոլութեամբ, ինչն ընդգծել են մատենագիրները, այլեւ նաեւ վերջինս, ամենայն հաւանականութեամբ, եղել է վայելչատեսք, բարեկիրթ եւ բանիմաց անհատականութիւն։ Եւ, հաւանական է, մի գուցէ դա է եղել «լարուածութեան, անհանդուրժողականութեան» պատճառը։

*ղովրդականաց ընծայելոց ի տուն Աստուծոյ գլուխ Ա»[17] կանոնական երկն է, որտեղ օրինականացուած են եկեղեցու սպասաւորների օգտին գանձուող հասոյթները՝ անասնապահութեան՝ մորթուող անասունների մասերի անուանարկման թուարկումով, իսկ հողագործութեան բնամթերքները ներկայացւում են ամբողջ բերքի տասանորդի չափով։ Ինչպէս նկատելի է պտղի այդ մասը նոյնացուել է տասանորդին. «Հասքն ձեր եղիցին ի պատարագաց կաշի և աջոյ երիանդամ և ճրագու, դմակ և սիրտ և լերդաբոյթ և երիկամունքն ճարպովին ի կողից և ի խոտցաց մասն, լեզուն և աջոյ ուկն, շրթունքն հոտոտելեօքն, աջոյ ակն և ամենայն խորհրդական մասունքն։ Իսկ **ի կալոյ** և **ի հնձանէ** և յայլոց արմտեաց՝ **տասանորդս հանցեն** իւրաքանչիւր ոք ձեզ, յաղագս մաքրելոյ ամենայն արդեանցն և աճման ամենայնի պատճառ լինելոյ»[18]։ Հայրապետական աթոռի օգտին հաւաքուելիք հիմնական հասի՝ պտղիի մասին յստակ ծանուցում է 1243 թ. Սիս քաղաքում Հեթում թագաւորի ու Կոստանդին կաթողիկոսի անմիջական ղեկավարութեամբ գումարած ազգային եկեղեցական Բ. ժողովի սահմանած 25 յօդուածներից 23-րդը (ԻԳ), որը որոշակի վերաբերում է տասանորդի հաւաքման իրողութեանը. «Եպիսկոպոսքն ծառայեսցեն զհայրապետական աթոռն կարգեալ հասիւն և ընծաիւք արժանաւորօք՝ ըստ կանոնաց. զի **սուրբ Լուսաւորիչն գրեալ է**, որ **քահանայքն զժողովուրդն տասանորդեսցեն**, և **եպիսկոպոսք՝ զքահանայսն**, և **հայրապետն՝ զեպիսկոպոսունսն**։ Արդ՝ եթե զայն չառնէք, ապա զչափաւորսն արարէք. և զպակասն՝ զոր գրեցաք, խնդութեամբ տո՛ւք, իբրև զօրհնութիւն և մի՛ իբրև զագահութիւն, որ աթոռքն հաստատ և անկարիք մնան, և եկեղեցիքն պայծառ, և Աստուծոյ օրհնութիւնն խառնի յարդիւնս արդարութեան ձերոյ. զի զայն Աստուծոյ տայք. և ոչ մարդոյ, և մարդոյ մի՛ երախտէք»[19]։*

*Նշեալ կանոնի համաձայն, որ աւանդաբար վերագրւում է Գրիգոր Լուսաւորչին («..**Այսպէս կարգեցաւ** (գրեալ է) **ի սրբոյն Գրիգորէ**»[20]) ընդգծելով սահմանում է, որպէսզի հայրապետական «աթոռքն **հաստատ** և **անկարիք մնան**, և **եկեղեցիքն պայծառ**», ուստի քահանաները ժողովրդից, հօտից, ծխից պէտք է հաւաքեն տասանորդ, այնուհետեւ եպիսկոպոսներն էլ՝ քահանաներից[21], իսկ հայրապետն (կաթողիկոս - **Ռ. Գ.**) էլ՝ եպիսկոպոսներից։ Եպիսկոպոսական աթոռի հաստատուն, անկարիք մնալու եւ եկեղեցիների պայծառութեան հանգամանքի մասին խօսւում է նաեւ նոյն Սսի **Բ.** ժողովի 20-րդ յօդուածում՝ «**երիցունք** ըստ ժողովրդեանն **ծառայեսցեն եպիսկոպոսին** սահմանեալ **հասիւն** և **ընծաիւք** ըստ պատշաճին»[22]։*

«Երիցունք», որոնք հաւաքում էին պտուղ հարկի կամ եկեղեցական տասանորդը, որից մասհանում էր կատարւում վիճակների եւ թեմերի եպիսկոպոսներին, վերջիններս հոգեւորական պատուիրակների՝ նուիրակների[23] միջոցով կարգաւորում էին Հայոց կաթողիկոսին հասանելիք «աթոռահասը»՝ տարուայ մէջ մի քանի անգամ այցելելով քա-

---

[17] «Կանոնագիրք Հայոց», հ. Բ., էջ 230, 234-235:

[18] Նոյն տեղում, էջ 235-236:

[19] «Կանոնագիրք հայոց», հրատ. **Ա. Ղլտճեանի**, Թիֆլիս, 1914, էջ 178-179: **Կիրակոս Գանձակեցի**, էջ 308:

[20] «Կանոնագիրք Հայոց», հ. Բ., էջ 236:

[21] «Կանոնագիրք Հայոց», հ. Բ., «Սոյնպէս և քահանայքն զամենայն նախակարգեալ հասն մատուցեն եպիսկոպոսաց առանց յապաղանաց», էջ 235-236:

[22] «Կանոնագիրք հայոց», հրատ. **Ա. Ղլտճեանի**, էջ 178-179:

[23] **Հր. Աճառեան**, Հայերէն արմատական բառարան, հ. Գ., = Պհլ., «պտղի եւ եկեղեցական տուրքերի հաւաքելու համար կաթողիկոսի կողմից ուրիշ երկիր կամ քաղաք ուղարկուած կրօնաւոր», **նուիրագ** «վանքի կողմից պտղի հաւաքող կրօնաւորը», Երեւան, 1977, էջ 471: Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ, **Մ. Արքեպիս. Սմբատեանց**, Տփխիս, 1904, էջ 457: **Գ. Մ. Գրիգորեան**, Սիւնիքի վանական կալուածատիրութիւնը IX-XIV դարերում, Երեւան, 1973, էջ 185:

հանայապետին[24]։ Իսկ վանքապատկան կալուածներից աթոռահասը հաւաքում էր յատուկ տնտեսական հարցերով զբաղուող մի պաշտօնեայ, որ աղբիւրներում կոչւում է ժողովարար[25]։

Եկեղեցական տասանորդի կամ պտուղ (պտղի) հարկն իր իրաւական փաստագրումն է ստացել Մխիթար Գոշի «Դատաստանագրում»՝ «Վասն պտղոց քահանայից ի ժողովրդոց» յօդուածում, որ, հաւանական է, զուգահեռ ընդօրինակուած է Ս. Գրքի հետեւեալ հատուածից. «Եւ այս են իրաւունք քահանայիցն ի ժողովրդենէն, որք զենուցուն զենիցիս եթէ արջառ իցէ և եթէ ոչխար տացէ քահանային զաջոյ երի, և զծնոտն և զխախացոցն։ Եւ զպտուղս ցորենոյ, և զգինոյ, և զիւղոյ և զպտուղս կտրոցաց խաշանց քոց տացես նմա»[26], ինչը հաւաստում է, որ այն անփոփոխ կիրառութիւն է ունեցել մինչ օրէնսդիրը։

Եպիսկոպոսական աթոռին տրուող հարկի չափը սահմանող մատենագրական նշանակալից վաւերագրերից է նաեւ Ստեփանոս Օրբէլեանի «Պատմութեան» վերջում զետեղուած «Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկ եկեղեցւոյ» ընդարձակ հարկացուցակը, որը կազմուած էր «ըստ հին սահմանաց»[27]։ Տաթեւի վանքին հարկատու 680 գիւղերը, որոնք ներկայացուած են ըստ գաւառների, եւ իրենց դիմացը կրում են դրամական միաւորներ։ Հարկացուցակի համաձայն՝ Տաթեւի գիւղի բնակիչները վանքին պէտք է վճարէին «**Ի Դ** բեռ **ցորեն** և **Գ լիտր մեղր** տան» եւ գլխովին **բոլոր գեղովս մէկ օր** վար անեն, **Բ օր** հունձ անեն, և **մէկ** օր ալ ջառ անեն ինչ բան որ լինի. և **մէկ** օր եզնարածքն վանքի համար խոտ հարեն»[28]։ Իսկ **Սբուարանց** գիւղի հասը, սահմանուել է՝ «**ԺԵ բեռն** և **Գ մարզան**[29] **ցորեն** և **Ա** օր **վար** անեն, **Բ** օր **հնձեն**, և եզնարածքն **Ա** օր խոտ հարեն, և իւրանց գեղի առաջին մարգիքն և հարեն և **Ա** օր ալ ջառ անեն»։ Այդ սկզբունքով նշւում է նաեւ **Աղանց** գիւղի հասը. «**Թ** բեռն, **Ա** մարզան **ցորեն** և Ա օր վարեն և Ա օր վեցկուն եզնարածքն խոտ հարեն և ..օր հնձին ջառ անեն»։ **Տանձատափ** գիւղի հարկը սահմանուել է. «**Զ** բեռն և **Ե մարզան ցորեն** և ԱՌ (1000) դե(կ)ան հուլավար [տասանորդ] տան, Ա օր վարեն, Գ օր հնձեն, Ա օր խոտ հարեն և Ա օր ինչ բան որ հանդիպի ջառ անեն վանքիս»[30]։

Հարկացուցակում նկատւում է մի ուշագրաւ իրողութիւն. Աղանց գիւղի հարկը՝ 9 (**Թ**) բեռ է, իսկ Տանձատափինը՝ Զ (6), սակայն հետաքրքիր է, որ վերջինիս հանդամասի տուրքը նշուած է դրամավճարով՝ («դե(կ)ան»[31]) եւ տասանորդի չափով չէ։ Ինչպէս նկատում ենք, նշուած յիշատակութիւնները վերաբերում են վանքին կամ եպիսկոպոսական աթոռին ենթակայ գիւղացիների կատարուելիք կոռային աշխատանքներին[32]։

---

[24] **Գ. Մ. Գրիգորեան**, նշ. աշխ. էջ 185։

[25] Նոյն տեղում, էջ 186։

[26] **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, աշխատ. Խ. Թորոսեանի, Երեւան, 1975, գլ. ՃՁ, էջ 345։ Գիրք Աստուածաշունչք, Վենետիկ, 1860, էջ 172։

[27] **Ժամանակագրութիւն** Ստեփանոսի Օրբէլեանի, հրատ. համար պատրս. պատմ. գիտ. թեկ՝ Աշ. Աբրահամեանի, Երեւան, 1942, էջ 44։

[28] Նոյն տեղում։

[29] Մարզպան (մարզան) – Զափ ինչ, որպէս մար կամ սափոր, ի կարասն ի լիտրն, ՆՀԲ, Երեւան, 1981, էջ 224. **Հր. Աճառեան**, պիլ. «հեղուկների կամ ընդեղէնի մի չափ, ըստ ՀՀԲ վեց քոռ պարունակութեամբ», Հայերէն արմատական բառարան, հ. Գ., էջ 283։

[30] «**Ժամանակագրութիւն** Ստեփանոսի Օրբէլեանի», էջ 44։

[31] **Ստ. Մալխասեան**, Հայերէնի բացատրական բառարան, «դեկան-դահեկան», հ. Ա., Երեւան, 1944, էջ 502։

[32] **Բ. Առաքելեան**, Քաղաքները, էջ 208։

*Պատմագիտական գրականութեան մէջ հետաքրքիր միտում է զարգացուել, ըստ որի Ս. Յակոբեանը նկատել է, որ Տաթեւի վանքի հարկատու 680 գիւղերի դիմաց նշուած են դրամական միաւորներ՝ դրամ-դահեկաններ։ Ստեփանոս Օրբէլեանի մի քանի ձեռագրերում գիտնականը նկատելով ծխերի դիմաց նշուած թուերի հետ նաեւ դահեկան, դրամ նշումները, որոնցից են («Նորիք՝ ԺԲ(12) դահեկան», («Սուրբ Գէորգ գիւղ՝ **Բ. դահեկան** եւ **Ը** (8) **դրամ**»)[33]՝ ըստ այդմ հեղինակն իրաւացիօրէն եզրակացրել է, որ Տաթեւի վանքի հարկատու բոլոր գիւղերը վանքի **հարկերը** վճարում են **դրամ-դահեկանով**[34]։*

*Նշեալ եզրայանգմանը համակարծիք է եղել նաեւ Գ. Գրիգորեանը նշելով. «Սիւնեաց վանական տնտեսութիւններում, ինչպէս նաեւ տասանորդի հաւաքման պրակտիկայում 10-րդ դարում գերազանցապէս արտայայտւում էր դրամական ռենտան»[35]։ Սակայն վերոնշեալ եզրայանգումները վիճարկել է լեզուաբան-վիմագրագէտ Ս. Աւագեանը, վկայակոչելով Գլաձորի համալսարանի բաբունապետ Եսայի Նչեցու վկայութիւնը, ինչը մինչ այդ անտեսուել, դուրս էր մնացել գիտական շրջանառութիւնից, որտեղ քահանաներին (հաւանաբար **եկեղեցուն - Ռ. Գ.**) տրուող հարկը (պտղին) սահմանւում է՝ ելնելով Սիւնիքում իրագործուող իրողութիւններից, որեւէ խօսք չնշելով դրամով վճարուող հարկի գոյութեան մասին. «Հասն, որք ի քահանայսն տան ի գրուէ ցորենոյն, ի վեցէն զմինն, ի քառէն ի վեցէն զմին արդուն։ Զեթ որ տան պտուղ քահանայիցն քսեստ մի, որ լինի ի սափորէն ի տասէն մինն»[36]։*

Ակնյայտ է, որ Եսայի Նչեցին շեշտում է բնամթերքով վճարուող հասոյթի իրողութիւնը։ Խնդրոյ երեւոյթը ընկալել եւ բազմաթիւ օրինակներով ընդգծել է նաեւ Պրոֆ. Բ. Առաքելեանը՝ իրաւամբ նշելով, որ միջնադարում, այնու ամենայնիւ, գերակշիռ է դառնում «արդիւնքներով ռենտան, որը դրամականի փոխուել էր առաւելապէս քաղաքներում, իսկ գիւղերում մնում էր տիրապետող»[37]։

Տաթեւի վանքի հարկատու գիւղերի եպիսկոպոսական աթոռին դրամական վճարման մասին, ուշագրաւ եզրակացութեան է յանգել բազմավաստակ Ղ. Ալիշանը՝ փաստելով, որ վանքը հաւաքելիս է եղել մեծաքանակ թուով դրամ, որը տատանւում է 580-600 շահու միջեւ։ Այն դէպքում, երբ պարսկական մէկ շահին հաւասար էր 0,25 ֆրանկ, ուստի մեծանուն հայագէտի իրաւացի դիտարկմամբ, Տաթեւի վանքը, թէեւ քաղաքական անբարենպաստ պայմաններում տարեկան գանձելիս էր եղել 120.000 ֆրանկ[38], ինչը խօսում է իրաւամբ վանքի «մեծութիւն կամ ճոխութիւն նոցին»[39], աներկբայօրէն, հաստատելով, որ Տաթեւի վանքը հարուստ եւ հզօր էր։

*Սակայն մատենագրական տուեալներից զատ նկատելի են նաեւ վիմական սկզբնաղբիւրներում նոյնպէս կոռային պարհակների վերացման դէպքեր։ 992 թ. Սահակ Աշարունեաց եպիսկոպոսի խնդրանքով՝ թագաւոր Գագիկ Ա. Բագրատունու կողմից վերացուել է, Անից ոչ հեռու գտնուող **Մրենոյ կոռն, որ ի Նախճվանիկ էր**. «..Այս իմ հրամանք են Գագկայ Շահիազնշահի ազատեալ եմ զՄրենոյ զկոռն, որ ի Նախճաւանի էր զմարդոյ եւ զեզին ի ձեռն խնդրոյ աստուածապատիւ տեառն Սահակա Աշարունեաց*

---

[33] **Ս. Յակոբեան**, Հայ գիւղացիութեան պատմութիւն, հ. Ա., Երեւան, 1957, էջ 390:

[34] Նոյն տեղում:

[35] **Գ. Մ. Գրիգորեան**, նշ. աշխ., էջ 196:

[36] **Ս. Աւագեան**, նշ. աշխ., էջ 55:

[37] **Բ. Առաքելեան**, Քաղաքները, էջ 222:

[38] **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 242-243. **Ս. Յակոբեան**, նշ. աշխ., էջ 391:

[39] Նոյն տեղում:

եպիսկոպոսի»[40]։

*Դեռեւս իր ժամանակ Ն. Մառը նկատել է, թէ հայկական «շարիաթը» ծագել է արաբական «sariat»-ից եւ մահմետական «շարիաթի» սովորութեան համաձայն՝ «շարիաթ» են կոչուել գանձուող բոլոր հարկերն ու տուրքերը[41]։ «Շարիատ» հարկային եզրոյթն, ըստ Ս. Յակոբեանի բնորոշման միջնադարում ենթարկուել է փոփոխութեան՝ հանդէս գալով աւելի իմաստային բազմաբնոյթ գործածութեամբ, քան «արքունական հարկը», «արքունի նեպակը», «չարը», «աշխարհական հարկը»[42]։ Այդ առումով ուշագրաւ է Տեկորի **ՆԻ** (971) թ. արձանագրութիւնը, որում ասւում է, թէ Խոսրովանոյշ թագուհին հաստատում է «Տեկորոյ շարիատն եղն կայթ մի»[43]։ Նոյն եկեղեցու **ՆԾԷ** (1008) թ. վաւերագիրը եւս փաստում է, թէ Հայոց թագուհի Կատրանիդէն՝ Գագիկ Ա. Բագրատունու արքայի ամուսինը, վերացրել է Տեկոր բնակավայրի հարկ-շարիատը. «Ի ՆԾԷ թուականութեանն Հայոց։ .. Կատրանիդէ Հայոց թագուհի դուստր Վասակա եւ ամուսին Գագկա թողեալ եմ զՏեկորոյ շարյատն վասն Գագկա շահանշահի արեւշատութեան եւ իմ՝ որդեացն»[44]։ Նոյն 1008 թ. (ՆԾԷ) Գագիկ Ա. Բագրատունի արքայի հրամանով ոմն Մուշէ ապահարկել, թողել է Փարպի բնակավայրի **զկորեկի շարեատն**. «Ի **Ն** և **ԾԷ** թուականին ես Մաւշե Գագկա հրամանով թողի զկորեկի շարեատն և տայ հայր ։Բ։ (2) խալ բանբակի ։Ժ։ (10)»[45]։*

Նման իրողութեան մասին են փաստում նաեւ Ալամանի եւ Մաստարայի բնագրերը։ Մաստարայի եկեղեցու 1015 թ. վիմագրի համաձայն՝ Համզէի որդի, իշխանաց իշխան Վահրամ Պահլաւունին ապահարկել է Մաստարա բնակավայրի շարիատ հարկը. «Ի ՆԿԴ թուականութեանս Թորգոմեան, ես Վահրամ իշխանաց իշխան, որդի Համզէի թողի զՄասդարայի շարիատն վասն Գագկայ Շահանշահի»[46]։ Նոյն այդ թուականին (1015) Աշոտ Ողորմած թագաւորի դուստր՝ վրաց եւ հայոց թագուհի Սոփին թողել, վերացրել է «.. Սոփէ շահնշահի Հայոց և Վրաց թագուհոյ թողել եմ զԱլաման շարյատս»[47]։

«Շարիատն» որպէս հողային ստոյգ հարկ է արձանագրում նաեւ Հովհաննավանքի անթուակիր, ակներեւաբար, 1205-1212 թթ. բնագիրը, քանի որ վաւերագրում շեշ-

---

[40] **Ղ. Ալիշան**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 138։

[41] **H. Марр**, Новые материалы по армянской эпиграфике, Сант-Петербург, 1893, с. 80.

[42] **Ս. Յակոբեան**, նշ. աշխ., էջ 404։

[43] **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 61. Վիմական տարեգիր, էջ 8։ Աշխարհբեկ Քալանթարը մի փոքր այլ վերծանութիւն ունի. «..զՏեկորո շարյետն յեզն կայթ մի», Ա. Քալանթար, Հայաստան քառէ դարից միջնադար, Երեւան, 2007. էջ 151։ Խոսրովանոյշ Հայոց թագուհին սահմանում է շարիաթ հարկի չափը։ Գառնիի Սուպեռնց վանքի Զե (1256) թ. բնագրում եւս նշուած է ուշագրաւ այդ եզրոյթը մի փոքր այլ անուանումով. «Ես Կարայպետս՝ առաջնորդ Գառնոյ, մեք՝ ամեն քահանայք և տանուտերքս.. վէրուցաք զվանացս.. **զկթանա հակ**», **Հ. Պետրոսեան**, Գառնին IX-XIV դարերում, Երեւան, 1988, էջ 101։

[44] Վիմական տարեգիր, էջ 13. Տեկորի **ՆԿԷ** (1018) թ. ոմն Թաթուլը վերացրել է Տեկոր **Հարկը**՝ Յովհաննէս-Սմբատ Բագրատունու արեւշատութեան համար. «Ի ՆԿԷ թկ· Յանուն Աստուծոյ ես Թաթուլս թողեալ եմ՝ զՏեկորո Հարկն վասն Յէվանէս թագաւորի եւ իմ՝ որդոյն երկար արեւշատութեան», **Ղ. Ալիշան**, Շիրակ, էջ 134։

[45] **Ա. Մանուչարեան**, Փարպիի Ծիրանաւորի արձանագրութիւնները, «Էջմիածին», 2014. Գ., էջ 90։ Գիւղատնտեսական կուլտուրաներից բամբակն ապահարկուել է Ս. Հռիփսիմէի տաճարի Զխե (1296) թ. «Ի թվիս Զխե ի պարոնութե իշխանաց իշխանին մեծին Շահընշահի և Աղբուղին, ես Շիրին խաթունս ու Պայալուկ խաթունս ու Թաւղթէս ու Թալէս ու Խոճէս ու Ղայիրս թողամ զՀռիփսիմուցս զբաբակին շարիատն և զշահնպահ բաբակի հակն»։ **Ա. Յարութիւնեան**, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրութիւնները, Ս. Էջմիածին, 2016, էջ 267։ Թաւղթէսը, Թալէս, Խոչէսը եւ Ղայիրսը Վաղարշապատի իշխանաւորներ են, որոնց թւում են նաեւ «տիկնաց-տիկիններ»՝ խաթուններ։ Ուշագրաւ է նաեւ **ու** շաղկապի գործածութիւնը, քանի որ կազմողն օգտագործում է **և** տառը։

[46] Վիմական տարեգիր, էջ 14. **Ղ. Ալիշան**, Այրարատ, էջ 136։

[47] Վիմական տարեգիր, էջ 26. **Ղ. Ալիշան**, Շիրակ, էջ 125։

տում է «ի ***տէրութեն Դդուփոլ Թամարին*** *և իր թագավորայզարն»* ***որդու Գաւրգէի*** *(Գէորգի-Լաշա* ***Ռ. Գ.****) անունը*[48]*. «..Ի տէրութեն պար(ոն) Դդուփալ Թամարին, իր թագավորայզարն որդի մեծն Մլքիսէթբեկին Գաւրգէ. Ես Ակսայջան, որդի Գոգորին ամուսին իմ Բեսուճի, հեցելաւ պար(ոնաց) ձեռնէ զերկիրս առին, ես չբաժանեցայ ի ծառութենէս։ Ա՛Ծ Պար(ոն)ացն աջողում էրետ, երկիրս էրեկ, Ոհանայվանք ինձ տվին հէրէնիք։ Հասարակաց տունս խլած էր ու* ***էգեց հողի շարիատ էր դրած****. Մեք էլ զհասարակ ի սբ Կարապետս ապսպարեցաք, վանից* ***էգոյ հողի շարիատն վեր կալաք՝*** *վս արևշատութե պարոնաց մերոց և պարոն Աթապակ Շահանշահի և Շրվանշահի հոգոցն համար և արձանգրեցաք յաւիտենական. Ես Ամսայջանս վեր կալայ և հաստատեցի պարոնաց հրամանաւ»*[49]*։*

Միջնադարում վանքերին եւ եկեղեցիներին աւատատէրերը որպէս հողի սեփականատէրներ նուիրում էին գետերից եւ ջրանցքներից օգտուելու իրաւունքը։ Վանական ջրաշինարարութեան մասին է վկայում Սիւնեաց պատմիչ Ստեփանոս Օրբէլեանի այն տեղեկութիւնը, որ Տաթեւի վանքի վանահայր եպիսկոպոս Յակոբը, Փիլիպպէ իշխանից գնել է Վարարակ կոչուող աղբիւրների ջրերը՝ 12.000 դրամով եւ մի թանկարժէք գոհարով՝ կառուցելով աւելի քան 30 կմ երկարութեամբ ջրանցք, դժուարին տեղերով ջուրը բերել եւ հասցրել է վանքի դիմացի առապարները՝ դարձնելով ***վարդուտս****. «Ես Յակոբ՝ շնորհիւն Ա՛Յ Սիւնեաց եպիսկոպոս գնեցի զՎարարակ ջուրն յաստուածապահ տեառն Փիլիպպէէ՝ Սիւնեաց տեառնէ, ընդ 12.000 դրամի և մի պատուական գոհարի, և բազում ծախիւք և մեծամեծ աշխատութեամբ վերին օգնականութեամբն ածի զջուրն ի լեռնէն Ջագէձորոյ և բերի ի վարդուտս, և տնկեցի որթս սորեկս և այգիս վայելուչս և դրախտս բազմածաղիկս և պտղալիցս ի վայելումն սուրբ հայրապետացն որ ի սուրբ աթոռս հաստատին և սուրբ ժողովոյս։ Եւ չկայ յայս ջրոյս հաշիւ ոչ Նորեցեաց, ոչ Խոտանանեցեաց, ոչ Շնհէրացեաց կամ Հալեցեաց, ոչ այլ մարդոյ, ոչ յարտ կտրել և ոչ ի մարգ և ոչ պարտիզի ջուր տալ զատ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ և անասնոյն»*[50]*։ Սակայն վիմական սկզբնաղբիւրներն արձանագրում են, որ այդ ջրանցքների մերձակայքի գիւղերի միջեւ յաճախ բռնկուել է կատաղի վէճեր։ Ինչպէս նշեալ իրողութիւնների մասին է յիշատակում Արուճի* ***ՅԺԶ*** *(867) թ. բնագիրը, որ յայտնում է Բագրատունի Աշոտ Ողորմածի օրօք, մերձակայ գիւղերի դաշտերն ոռոգելու համար, բռնկուել է գժտութիւն Արուճի, Կոշի եւ Գաւառ բնակավայրերի միջեւ. «****ՅԺԶ*** *(867) թուականին հայոց իշխանութի Աշոտոյ և տէրութի Սմբատա հայոց ասպարապետի Բագրատունոյ և կաթողիկոսութի Զաքարիաի, էղև կռիւ ընդ յԱրուճ և ընդ Կոշ և ընդ Գաւառն»*[51]*։ Բագ-*

---

[48] Ըստ Պ. Մուրադեանի հաւաստի մեկնաբանութեանը՝ Գէորգի Լաշան, Թամար թագուհու որդին թագադրուել է 1205 թ. «Այս երանելին դեռ իր կենդանութեան ժամանակ թագադրեց որդուն՝ Գէորգիին, որին Լաշա եւս կոչեցին։ Թագադրուելիս տասներեք տարեկան էր, եւ Թամար թագուհին օրհնեց նրա թագաւորութիւնը։ .. Գէորգի Լաշայի ծննդեան թուական պէտք է ընդունել 1192 թ., .. այստեղից Լաշան «գահակից թագաւոր» է դառնում 1205 թ.», «Վրաց ժամանակագրութիւն (1207-1318)», Թարգմանութիւնը հին վրացերէնից, առաջաբանը եւ ծանօթութիւնը Պարոյր Մուրատեանի, Երեւան, 1971, էջ 45։

[49] **Կ. Ղաֆադարեան**, Հովհաննավանք, էջ 100։

[50] **Ստեփանոս Օրբէլեան**, էջ 254-255։

[51] **Ս. Բարխուդարեան**, Դիտողութիւններ եւ նոր նիւթեր Հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերեալ, Նիւթեր Հայաստանի գիւղատնտեսութեան եւ գիւղացիութեան մասին ժողովածոյ, Երեւան, 1964, էջ 274, այսուհետ Դիտողութիւններ ոռոգման գործի։ **Կ. Մաթեւոսեան**, Արուճ, Երեւան, 1987, էջ 29։ Ոռոգման ջրից օգտուելու ողբերգական դէպքի մասին է իրազեկում Ջրվէժի **ՈՒԲ** (1173 թ.) բնագիրը։ Համաձայն յիշատակագրի՝ ոմն կիսաւեայ խաչատուրը զոհ է գնացել ոռոգման ջրի համար. «Այս տուն սգո մթան .. խաչատրէ, որ սպանաւ ի վրա ջրիս Ջրվիժո կիսաւրե ելի յաշխարհե .. թվին :ՈՒԲ»։ **Ա. Շահինեան**, Հայաստանի միջնադարեան կոթողային յուշարձանները IX-XIII դարերի խաչքարերը, Երեւան, 1984, էջ 40։

*բատունի Սմբատ Բ.-ի **ծառայ**՝ գործաւոր-պաշտօնեայ Վռամի որդի Գրիգորը, Բագրատունի իշխանի հրամանով կարգաւորել է գիւղերի միջեւ ծագած ջրօգտագործման վէճը. «..Ա և կէս Կոշա և Ա Արուճ»[52]։ Այդպիսի կատաղի վէճ է ծագել նաեւ 1036 թ. Տեկորի եւ Ագարակ գիւղերի միջեւ։ Գիւղերի միջեւ բռնկուած վէճը կարգաւորուել է՝ «զինչ առաջի թագաւորու»՝ Տեկորին տրուել է ջրից օգտուելու չորս օր, չորս գիշեր, իսկ Ագարակ գիւղին՝ երեք օր ու երեք գիշեր. «ՆՁԵ Հայոց, ի թագաւորութեան Յիվանէսի Շահանշահի և հայրապետութեան Պետրոսի հայոց վերադիտողի, ի տէրութեան Սարգսի, արևելից դուկիս,.. Տեկորոյ ջրոյս և Ագարակաց ուղելո զինչ առաջի թագաւորու, **Դ** աւր, և **Դ** գիշեր Տեկերոյ, և **Գ** աւր և **Գ** գիշեր Ագարակաց»[53]։ Նշելի է նաեւ Կոշի եկեղեցու հնագոյն բնագիրը, որ տեղեկացնում է, թէ ՇԺ (1061) թ. **թափել**, վերացրել, ազատել է յիշատակագրի հեղինակ, վանքի վանահայր **Յոհաննեսը**՝ բնակավայրի միւս պաշտօնեաների՝ տանուտէրաւքս, դատաւորն, աւագէրէցն, մանկեւագն՝ բնաջուր առուն. «ՇԺ թվականիս, ես Հայր Յոհաննես բազում աշխատութեամբ Մաղատին երդուեալ Կոշա տանուտէրաւքս, դատաւորն, աւագէրէցն, մանկեւագն թափեցին զբնաջուր առուն»[54]։*

*Իսկ Շիրակաւանի **ՈՀԷ** (1228) թ. բնագիրը փաստում է, թէ աթաբեկ Իվանէ Ա. եւ նրա ամուսին Խոշակը զիջում են (**յորդէց յորդիք**) Շիրակ գիւղի («զապուռիշի[55] և զջրսահին բաժն[56]»). «Ի. Թ. **ՈՀԷ** շնորհիւն Այ ես Աթաբէկ Իւանէ եւ Խոշակս վրաց եւ Հայոց թագոհի վասըն յերկար կենդանութեան հարազատաց մերոց Մանդատոր Թախուցէս Շահնշահի եւ Ամիր սպասալար Աւագին թողաք զգեղիս Շիրակա զապուռիշի եւ զջրսահին բաժն յորդեցէ յորդիք ազատ ի բաժէն.»[57]։*

*Մրենի եւ Արուճի եկեղեցիների վիմական բնագրերում յիշատակւում է «հացաբույսերից եւ հացից գանձուող «շարիատ» հարկը։ Մրենի եկեղեցու ՁԼԳ (1284) թ. վաւերագիրը տեղեկացնում է, որ Աւետենց որդի Սենոպ Սահմադինը յայտնում է, թէ սկզբում՝ «հալալ արդեանց», գնել է Մրենը, իսկ յետոյ՝ ապահարկել գիւղի վրայ դրուած տուրքը՝ «տասնակն հացին, որ ի շարիատ էր». «ՁԼԳ.. այս մեր արձանագիր է պարոն Սէնոպ Սահմատինս Աւետեց որդոյս եւ կենակից իմ՝ Ուրտուրիտայ որ **յառաջ գնեցի** զՄրեն յիմ՝ հալալ արդեանց եւ հաստատեցաք արձանագրով եւ թողաք **զՄրենոյ տասնակն հացին** որ ի[58] շարիատն»[59]։ Ինչպէս երեւում է մեծահարուստ Սենոպ Սահմադինը մինչ այդ՝ ՁԻԲ (1273) թ. նաեւ զիջել, թողել էր Մրենում գտնուող Արջոառիջին պատկանող այգիների **խալէ** հարկը. «.. ազատեցի զՍուրբ ուխտն Արջվառջո այգիքն Մրենո և Աւշականո ի խալաէ և յաւելորդ հարկէ, որ բնական ազատ էր»[60]։ 1288 թ. վերջինս*

---

[52] **Ս. Բարխուդարեան**, Դիտողութիւններ ոռոգման գործի, էջ 274:

[53] Վիմական տարեգիր, էջ 20: **Ղ. Ալիշան**, Շիրակ, էջ 135:

[54] **Ս. Ա. Աւագեան**, Վիմական արձանագրութիւնների բառամնութիւն, Երեւան, 1978, էջ 46:

[55] **Հր. Աճառեան**, Հայերէն արմատական բառ. «պէտք է կարդալ **ապուռ իշի**, էշի հարկ», **Ալիշան**. «ջրի հարկ». **Karst**. «ջրանցք», **Մառ**. «դոյլ, ջրաման», հ. Ա, էջ 238-239: էշի հարկի մասին խօսւում է նաեւ Բագրատ Վիկացու բնագրում. «..գինևոր անեցի եթէ սայլով եթէ **գրաստով**՝ բաժն ազատ է», Դիւան, պրկ. Ա, էջ 37:

[56] Ջրսահն՝ ըստ Բ. Առաքելեանի նշանակում է ջրմուղի, լաստ, **Բ. Առաքելեան**, Քաղաքներ, հ, 2, էջ 211: Այլ բնագրերում ջրից գանձուող հարկն առանձին անուանում ունի՝ Աւգան եզրոյթը: Առաջին անգամ յայտնի է Սանահնի բնագրից. «Ես Վասակ ետու.. :Ժ: աւրավար հող լաւ աղբոյրն ազատ յամէն հարկէ Մուսէսն իւր տամբն, որ կոռին հողն բանեցնէ ու **աբգանին** Հաշուին աղ բերէ»: **Կ. Ղաֆադարեան**, Սանահնի վանքը եւ նրա արձանագրութիւնները, Երեւան, 1957, էջ 122. **Ս. Բարխուդարեան**, Դիտողութիւններ, էջ 274:

[57] **Ղ. Ալիշան**, Շիրակ, էջ 81:

[58] Յ. Օրբէլու վերծանութեամբ **է** է, ոչ թէ **ի**, Տես՝ **И. А. Орбели**, Надписи Мрена, Հայագիտական հետազօտութիւններ, Երեւան, 1974, էջ 38-39:

[59] **Ղ. Ալիշան**, Շիրակ, էջ 140. **И. А. Орбели**, նշ. աշխ., էջ 39:

[60] **И. А. Орбели**, նշ. աշխ. էջ 39:

*կրկին վերացրել է Օշական բնակավայրի **հացի** եւ դարմանի շարիատը[61], ինչը խօսում է, թէեւ բնակավայրն ապահարկուած էր, սակայն մոնղոլ հարկահանները կրկին տուրքադրել են։*

*Արուճի տաճարի ՉԼԴ (1285) թ. վիմագրում նշւում է, որ ոմն Խուսան աղայի որդի Մանկլին, ով, անշուշտ, պէտք է մեծահարուստ անձնաւորութիւն լինէր, գալով իր հօր գնած **գանձագին** Արուճ գիւղը՝ թողել է բնակավայրի հարկ շարիատը. «Ի թուիս ՉԼԴ Արղուն խանին, ի թագաւորութենն Դեմէտրէի պարոնութենն Մխարկրծելին եղբաւրն Իւանէի, որդոյն մեծին Շահնշահի, ես Մանկլի Խուսան աղայիս որդիս եկի Արուճ իմ հաւրն գանձագին գեղս և **թողի զհացին շարիատն** հաստից ի ։Ռ։ տարի պարոն որ այս գեղիս տէր գայ ..»[62]։*

*Բագնայրի անթուակիր վաւերագիրը, որն ակներեւաբար, փորագրուել է XI դ. առաջին կէսին, քանի որ արձանագրում է՝ **տիկնաց տիկին Սեդան**՝ բնակավայրի, գիւղի (իմա՝ Գաղտա) գանձուող պտուղ հարկի տասանորդն ընծայում է վանքին. «Ես Սեդա տիկնաց տիկին, դուստր մեծին Վասակա, զուգակից Վահրամա իշխանաց իշխանի, որդոյ Աշոտոյ իշխանաց իշխանի, **տասանորդեցի**[63] զվաստակս գեղջն **իմոյ Գաղտաի** ընծայելով ի սուրբ ուխտս Բագնայրիս վասն յիշատակի զաւրականին Քրիստոսի, հաւրն իմոյ Վասակա փոխեցելոյ յաշխարհէս. եթէ ոք ի մեծամեծաց կամ ի փոքունց»[64]։ Համաձայն բնագրի՝ անյայտ է մնում տասանորդուող բնամթերքի անուանումը։*

Այսպիսով, վերոնշեալ բնագրերից ելնելով նկատելի է, որ գիւղի, շէնի, այսինքն, անմիջական բարիքներ արտադրող հարկատու բնակչութիւնը հարկ-տուրք կամ արդիւնքներով ռենտա էին վճարում հողատէր կալուածատէրերին կամ իշխանաւորներին, որտեղ գերակշռում է հողահարկը, անասնահարկը, խոտահարկը։

*Սակայն Անիի Ս. Առաքելոց եպիսկոպոսանիստ եկեղեցու երեք բնագրերում ուղղակի ընդգծւում է աթոռահարկի մասին։ Առաջին վիմագիրը յայտնում է, որ Աբուղամրի որդի Գրիգոր Արքեպիսկոպոսը **թողել**, վերացրել է մահացածների համար գանձւող «զհարկն հոգոյս» **ՈԿԵ** (1216) թ. «..ի սկզբանէ սահման էր **յամենայն մեռելէ ։ԺԱ։ (11) դրամ**». «Ի թուականին ։ՈԿԵ։ Ես Գրիգոր որդի Ապուղամրի ժառանգորդ սեփհական հայրենի աթոռոյս մայրաքաղաքիս Անւո, արհիեպիսկոպոս յայսմ նահանգի, թողի զհարկն հոգոյս զոր ի սկզբանէ սահման էր յամենայն մեռելէ ։ԺԱ։ դրամ տալ ի փարթամաց և աղքատաց առհասարակ միապէս արնելով»[65]։ Նոյն Արքեպիսկոպոս Գրիգորը մէկ տարի յետոյ վերացրել է նաեւ Անիի եւ Շիրակ գաւառի՝ եպիսկոպոսական աթոռին տրուող հարկը. «Որ էր թուականիս ։**ՈԿԶ**։ (1217) ես Գրիգոր որդի Ապուղամիր, արհեպիսկոպոս կամեցաք առնուլ զեդեալ հարկ ի մեր գաւառէս Շիրակա, և քաղաքիս եկեղեցեացս ի յԱնոյ, զի սահման էր ի սկզբանէ **յամենայն գեղէ երկու գըրիւ հաց**[66]*

---

[61] **Կ. Կոստանեանց**, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 129։

[62] **Կ. Մաթեւոսեան**, Արուճ, Երեւան, 1987, էջ 61։ **Հ. Մանանդեան**, Երկեր, հ, Դ, էջ 48-154։

[63] Վիմական բնագրերում **տասանորդ** եզրոյթին բաւական ուշագրաւ տերմին է աւանդուել, որ արձանագրում է միջնադարեան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակն ու իրաւական յարաբերութիւնների մասին։ Այդ տերմինն է **դահիակը** (=դահիաք, դահեկ), («պարսկ. dahyak, Տասանորդ, տասից մէկը, կազմուած պրսկ. dah «տասը» եւ yak «մէկը» բառերից, **Հր. Աճառեան**, Հայերէն արմատական բառարան, հ. 3, էջ 615)։ Քանաքեռի խաչարձանի (ՉԺԵ։ 1266 թ.) եւ Երեւանի կաթողիկէ եկեղեցու (ՉԺԳ։ 1264թ.) բնագրերում յայտնի է որպէս տուրք։ Տես՝ **Ս. Ա. Աւագեան**, Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն, Երեւան, 1978, էջ 59-62։

[64] **Դ. Ալիշան**, Շիրակ, էջ 113։

[65] Դիւան հայ վիմագրութեան, պրակ. I, էջ 14։

[66] Գրիւ, պարսկ. girib ընդեղէնի չափ garib, հողի չափ, ընդեղէն (ցորեն, գարի), **Ստ. Մալխասեան**, Հայերէն

յաթոռս տալ, և ի քաղաքիս ամենայն եկեղեցիս մորթի մին Զատիկին տան։ Արդ ես յաղագս յերկարկենաց պատրոնացն իմոց ազգականաց և եղբարց իմոց թողի զայս հացս ամենայն գեղի մեծի և փոքու և Զատիկ մորթին ամենայն եկեղեցոյ»[67]*։ Երրորդ յիշատակագիրը յայտնում է, որ ։**ՈԿԹ**։ (1220) թ. Ապիրատի որդի Տէր Սարգիսը, աթաբեկ Իվանէ Ա. Զաքարեանի եւ ամիրսպասալար Շանհնշահ-Սարգսի (Զաքարէ Մեծի որդու - **Ռ. Գ.**) օրօք, ամիրայ Երկաթի առաջնորդութեան ժամանակ, (հաւանական է վերջինս քաղաքի քաղաքապետն էր) «մեծ սպարապետին հայոց Զաքարէի» յիշատակին վերացրել է «Ի թուիս ՈԿԹ..ես տէր Սարգիս, որդի Ապիրատին, առաջնորդ մայրաքաղաքիս Անւոյ..ազատեցաք զամենայն քաղաքիս **քահանայիցս զիրիցակնոջ մուտք**՝ զմահու և զկենաց և զմատաղաց, զփարթամաց և զաղքատաց, զեկաց և զբնակաց թէ լաւ, թէ վաթար իրիցակին վախճանի **ոչ մեծ մուտք** և **ոչ փոքր ի յաթոռս չտայ**»*[68] տուրքը։ Նկատելի է, որ վաւերագիրը շեշտում է տուեալ ժամանակաշրջանում քահանայական դասի՝ երեցանու բազմանդամ լինելու պարագան, ինչպէս իրաւամբ նկատել է Կ. Մաթեւոսեանը*[69]*։ Բնագրից հաստատապէս կարելի է դատել, որ հոգեւոր դասի սոցիալական պատկերը բաղկացած էր ունեւոր եւ աղքատ՝ «**զփարթամաց** եւ **զաղքատաց**», նաեւ «**թէ լաւ, թէ վաթար**»*[70] շերտաւորումից, ինչպէս եւս ընդգծւում է վերջիններիս բնիկ եւ եկուոր լինելու պարագան «**զեկաց** և **զբնակաց**»*[71]*։*

Ինչպէս նկատելի է ՈԿԵ (1216) եւ ՈԿԹ (1220) թուականների բնագրերը, արձանագրում են, որ Անիի հոգեւոր դասը ձգտել է հնարաւորինս խուսափել հարկատու վիճակից[72]*։ Բայց Անի Սբ. Առաքելոց տաճարի ։**ՉԼԸ**։ (1289) բնագրի վկայութեամբ ար-*

բացատ. բառ., Երեւան, 1944, էջ 477, **Հր. Աճառեան**, «մի տեսակի չափ արմտիքի համար», պհլ. griw, պարսկ. girib. նրանց փոխառեալ ասոր. geriba, Հայերէն, արմատական բառ., Երեւան, 1971, հ. Ա, էջ 606. Ըստ Ռ. Վարդանեանի, որպէս աթոռահարկ իւրաքանչիւր գիւղից վրցրուած երկու գրիւ հացը կազմել է «17,28 կգ և 23,07 լիտր ցորեն», (**Ռ. Վարդանեան**, Հայաստանի չափերն ու կշիռները (V-XV դարեր), Երեւան, 1989, էջ 191)։ Գրիւ-ի հողային չափման միաւորը պահպանուել է Վանստանի եկեղեցու անթուակիր մի բնագրում. «..Հրամանի Ա3 աթապակ Իւանէի, ես մեղապարտս Դաւիթ, առաջնորդ Արարատեան նահանկ, շինեցի զՍուրբ Կաթողիկէն ի Վիրապին.. Եւ ընծաեցի ի սա զԴունա վերի Ա հող և ։ձ։ **գրուի հող** ի զԱփարանիին, և զՆաւանորո հողն և գրեցի զաւագ խորանին». **Աշխարհիբեկ Քալանթար**, Հայաստան քարէ դարից միջնադար, Երեւան, 2007, էջ 57։ Հաւանական է բնագիրը փորագրուել է 1212-1227 թթ. Իվանէ Զաքարեանի աթաբեկութեան շրջանում։

[67] Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, էջ 16։

[68] Անդ, Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, էջ 17։ Հաւանական է հոգեւոր բարեկեցիկ (**լաւ**-ունեւոր) դասը մի փոքր աւելի է վճարել (**ոչ փոքր**), քան **զաղքատաց** (**թէ վաթար**)՝ **չունեւորը**։ Ապիրատի որդի Տէր Սարգիսը յիշւում է Բագնայրի վանքի՝ 1209, 1210, 1211 թթ. բնագրերում։ **Ն. Սարգսեան**, 1864, էջ 180։

[69] **Կ. Մաթեւոսեան**, Անի, Ս. Էջմիածին,1997, էջ 75։

[70] Դիւան, հայ վիմագրութեան, պրակ I, էջ 17։

[71] Նոյն տեղում։ Կ. Մաթեւոսեանն իրաւամբ տարակուսելի է համարել վաւերագրի թուականը (1220 թ.), քանի որ այս թուականից առաջ եւ յետոյ որպէս Անիի եւ Շիրակի արքեպիսկոպոս է յիշւում Աբուղամրի որդի **Գրիգորը** (յետագայում կոչուել է Գրիգոր Մագիստրոս) «Ի թուականին ։**ՈԿԵ**։ (1216) ես **Գրիգոր որդի Ապուղամրի** ժառանգորդ սեփական հայրենի **աթոռոյս մայրաքաղաքիս Անւոյ**, արհիէպիսկոպոս **յայսմ նահանգի**»։ Նոյն է նաեւ «։**ՈԿԶ**։ (1217)։» բնագրում Դ, I, 14։ Գիտնականը շեշտում է, որ ։**ՈԿԹ**։ բնագրի թուականի միաւորը գուցէ սխալ է եւ գրուել է աւելի վաղ. կամ թուականը ճիշտ է եւ մայրաքաղաքում գոյութիւն է ունեցել հոգեւոր իշխանութեան երկու բարձր պաշտօն՝ **առաջնորդ** եւ **երէցապետ եպիսկոպոս**։ **Կ. Մաթեւոսեան**, նշ. աշխ. էջ 80։ Հետաքրքիր կռահում է, սակայն այդ դէպքում պէտք է կարծել, որ Աբուղամրի որդի Գրիգորը (յետագայում Մագիստրոս) դաւանափոխ է եղել եւ ծառայութեան է անցել վրաց եկեղեցում։ Ակնարեւաբար՝ «երէցապետ եպիսկոպոս» ասելով Կ. Մաթեւոսեանը նկատի ունի հաւանաբար, թեմական եպիսկոպոսին՝ «վերադիտող»-ին։ Անիի հոգեւորականութեան վերաբնակեցմանն է վերաբերում նաեւ հետեւեալ բնագիրը. «Ես տէր Սարգիս եպիսկոպոս.. իրիցանուս **եկաց** և **բնակաց**», Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, էջ 25։

[72] Անիի Սարգիս Ծիլենցի բուրգի անթուակիր բնագրի համաձայն՝ բաժրար Սարգիս Ծիլենցը վերացրել, թողել է Արջուառնոյ Սուրբ Գրիգոր եկեղեցու բաժը՝ մեծ եւ փոքր. «Ես Սարգիս Ծիլենց բաժրարս թողի զԱրջուառնո սուրբ Գրիգորո **զբաժն՝ մեծ** և **զփոքր**, **վասն հանկըստեան պատրոնին մերո Շահնշահի** և ԱՇատուր զաւակացն Զաքարիայի և եղբարց նորա յերկարկենդանութեան», Դիւան, հայ վիմագրութեան, պրակ I, էջ 3։ Ամենայն

ձանագրում է ուշագրաւ իրողութիւն, որ հարկադրուել է նաեւ Անիի հոգեւոր բարձր Աթոռը՝ նուաճող մոնղոլների կողմից, այդ թւում միաժամանակ հարկադրուել է եւս հոգեւոր (իրիցանին) դասն. «Թվին ։ՉԼԸ։ (1289) ես պարոն Աղբուղայս, որդի ամիրսպասալար Շահնշահի, թոռն մեծին Զաքարիայի, և ես պարոն Թամարս, դուստր իշխանաց իշխանի պարոն Բուղտային, տեսաք ***զԱնո աթոռս*** *և* ***զիրիցանիս որ հարկ կէր ի վէրէնին****, զոր մեք»*[73]*։ Սակայն ՈԿՁ թ. բնագրում արձանագրում է, որ Աբուղամրի որդի Գրիգոր Արքեպիսկոպոսն ազատում է Շիրակ գաւառի եւ Անիի եպիսկոպոսական աթոռին տրուող «****յամենայն գեղէ երկու գըրիւ հաց յաթոռս տալ****» եւ եկեղեցական տօներին մորթուելիք անասունների մաս հանումից։ Ինչպէս իրաւամբ նկատել է Բ. Առաքելեանը դժուար է կարծել եպիսկոպոսական աթոռի հարկը բաղկացած էր միայն ցորենից եւ մորթուող անասունների մասհանումներից, քանի որ Տաթեւի վանքի հարկացուցակը բաղկացած է կոռային հոկայական պարհակներից, որոնք կատարւում էին խստագոյնս։ Տաթեւի եպիսկոպոսական աթոռին իր մեծութեամբ զիջող Բջնիի*[74] *եպիսկոպոսական աթոռանիստ տաճարի ՉՀԴ (1325) թ. վիմագիրը յայտնում է, որ Զաքարեան Խոշաք իշխանուհու որդի Զաքարէն ապահարկում է ամիրահարկն, հարսանէհարկն, կովայհամարն, կալայթաղարն, սայլահարկն եւ մահկանէն*[75]*. «Թվին ՉՀԴ ..Ես Զաքարէ, որդի Սահիպդիվանի և պարոն Խոշաքին.. ի վեր կալայ որ ի Բջնի այլ մարդոյ տէրութիւն չէլնի. և թողի զամէն հարկն՝ զամիրահարկն, զհարսանէհարկն, զկովայհամարն, զկալայթաղարն, զսայլահարկն, զմահկանէն, աւտարականն քան զդաղմէն այլ իրք չտա»*[76]*։ Նշեալ եզրոյթ հարկերից, ակներեւաբար, անշուշտ օգտուելիս կը լինէր նաեւ եկեղեցին, թէեւ Ամբերդի բնագրում մի փոքր այլ անուանումով է նշուած* ***հարսանէհակ*** *եզրոյթը (=«ի* ***պսակի*** *։Գ։ դ[ա]հ[եկան]»)*[77]*։*

հաւանականութեան բնագիրը պէտք է փորագրուած լինի 1261 թ. յետոյ, քանի որ շեշտում է «**հանկըստեան** պատրոնին մերո **Շահնշահի**», ուստի դէպքը կատարուել է, այն ժամանակ, երբ Շահնշահ Ա. Զաքարեանը լսելով աւագ որդու՝ Զաքարէի սպանութիւնը Հորդայում, Հոլաւու իշխանի կողմից, յանկարծամահ է եղել Օձունում՝ նշեալ թուականին. «Եւ յորժամ լուաւ զգոյժն հայր նորա Շահնշահ ի գիւղն Օձուն, ի նեղաստութիւն անկեալ՝ ի տրտմութենէն մեռաւ», **Կիրակոս Գանձակեցի**, էջ 393: «Բաժպան, բաժրար կամ մաքսապետ», պիլ. **Թադ. Ավդալբեգեան**, Հաս, սակ, բաժ, (Հայաստանի տնտեսական զարգացման խնդիրների շուրջ), Հայագիտական հետազ.ներ, Երեւան, 1969, էջ 390:

[73] Դիւան, հայ վիմագրութեան, պրակ I, էջ 22:

[74] Բջնիի Սբ. Աստուածածին տաճարի **ՆԶ** (1031 թ.) բնարգրի՝ եպիսկոպոսանիստը հիմնարկուել է **Տն. Պետրոսի** (Ա. Գետադարձ) **հրամանք**-ով. «Թվին ՆԶ ..Այս **իմ հրամանք է Տն Պետրոսի**, Հայոց կաթողիկոսի և Սմբատա Շահնշահի, որ հաստատեաց եպիսկոպոսարան ի Բջրի քաղաք զՍԲ Աստծինս հիմնարկեալ կարարեաց Գրիգոր իշխանաց իշխան, որդի Վասակայ», **Հ. Եղիազարեան**, Բջնիի վանքը եւ Բջնի գիւղի միւս յուշարձանները, Ս. Էջմիածին, 1963, Թ-Ժ, էջ 44. Գ. Գ. Սարգսեան, Նորավանքի նուիրատուական արձանագրութիւնները եւ մի տեղադրութեան նշգրտման փորձ, «Նորավանք», ՀԱՍԵ Սիւնեաց թեմի հայագիտական տարեգիրք, հ. Բ, Մոնրէալ-Երեւան, 2001, էջ 80:

[75] **Գ. Գրիգորեան**, Դիտողութիւն միջնադարեան մի տերմինի մասին, Պատմա-Բանասիրական հանդէս, Երեւան, 1963, 2, էջ 260:

[76] **Հ. Եղիազարեան**, Բջնիի վանքը եւ Բջնի գիւղի միւս յուշարձանները, Ս. Էջմիածին, 1963, Նոյեմբեր, Թ-Ժ, էջ 47. **Ս. Ա. Աւագեան**, Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն, Երեւան, 1978, էջ 160, այսուհետ Բառաքննութիւն: Որոշ տարընթերցում է նկատւում Ս. Աւագեանի մօտ (հարկ-հակ): Որպէս հարկահաւաք պաշտօնատար գործակալ՝ **ամիր-ա-հարկն** որոշակիօրէն հաստատագրուած է **Մրենիի** :ՉԻԲ: բնագրում «..**ոչ ամիրին**, ոչ ձեռնատրի, **ոչ ում ձեռն չկա** ի վերա», **И. А. Орбели**, Надписи Мрена, Հայագիտական հետազօտութիւններ, Երեւան, 1974, էջ 39:

[77] «**Հարսանէհակ**» պարտոյթի մեկնաբանութիւնը պատմագիտական գրականութեան մէջ ըստ լեզուաբան-վիմագրագէտ Ս. Աւագեանի՝ միջին դարերում ամուսնացողները պէտք է **տեղական վարչական իշխանութիւններին** վճարէին՝ **ամուսնական իրաւունք ստանալու համար**: Իսկ Պրոֆ. Բ. Առաքելեանը հաւանական է համարում, որ նշեալ պարտոյթը **հոգեւոր տուրք** էր եւ տրուելիս է եղել **եկեղեցուն**, ակներեւաբար եպիսկոպոսական աթոռին: **Բ. Առաքելեան**, Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Երեւան, 1964, էջ 222

*Իբրեւ եկեղեցական հարկ եկեղեցիներին լուսաւորութեան համար տրուելիս է եղել նաեւ ձէթի հարկ, որ յիշատակւում է Մարմետի մատուռի վաւերագրում. «ՁԽԸ կամաւն ԱՅ Բեսուտին հրամանաւն արձանագիր եղեւ, որ զՁիթին հարկն ի Սուրբ Աստուածածինս տան անխաբան»[78]։ Եզրոյթը յայտնի է նաեւ Հովհաննավանքի ՊԱ (1352) թ. վիմագրից, որը սահմանում է որոշակի քանակ, տուեալ դէպքում՝ «**հակէ կէս լիտր**». «Թվ ։ՊԱ։ մեք Յոհանայվանից միայբանքս ..տվաք ձիթայհանաց հակէ կէս լիտր ձէթ Սբ Կարապետիս, ։**Ա։ լիտր** հասարակաց»[79]։ Նշեալ հարկը յիշատակւում է եւս Գառնիի Սուպենց վանքի ՁԵ (1256) թ. վաւերագրում. «..հակ որ սբ Ածածնիս լուսացու լինի»[80]։*

*Այսպիսով, չի բացառւում, որ Գետկայ վանքի՝ ։ՁԹ։ (1260) թ. վաւերագրով Յովհաննէս Արմանեցին վերացնում է եպիսկոպոսական աթոռին տրուող հացաբոյսերից գանձւող հարկը, որի շարունակական բնոյթը նկատւում է նաեւ Կոթավանքի ՁԻԴ (1275) թ. ուշագրաւ բնագրում, որն ընդգծում է, թէ գիւղից, շէնից գիւղապետին, աւանապետին, տուեալ դէպքում դէմէթարի օգտին գանձուող մի շարք հարկեր, այդ թւում նաեւ՝ **հացի հարկը** վերացուել է ինքնակամ. «ՁԻԴ յաշխարհակալութե Ապաղա[յ դա - **Ռ. Գ.**]նին և Խարնոխին, պարոն Տարսայիճին։ Ես Ջոլբէկ զայս թողի դէմէթարայհակն։ զդոշն, զմշակն գործիքն։ Ժ։ գրիւ հաց ի գեղս ։Ա։ եզ, ։Ա։ կով իմ գլուխ»[81]։ Սակայն նկատելի է, որ հացաբոյսերից զատ, եկեղեցուն տրուել է նաեւ ձէթի հարկն որպէս լուսացու, ինչպէս նշւում է Ամբերդի ՆՀԵ բնագրում. «յԱնբերդի պտուղ ի տունն .Դ. կախիճ ցորեան, .**Ա. կտաւհատ**», ինչը շեշտւում է եւս Եսայի Նշեցու վկայութիւնում. «**Ձեթ** որ **տան պտուղ** քահանայիցն քսեստ մի, որ լինի ի սափորէն ի տասէն մինն»[82]։*

*Հոռոմոսի տաճարի **ՈԿԶ** (1217) յիշատակագրի համաձայն՝ Խվանդ ամիր-Սուլթանը վանքին է ընծայել «զճարպկանց մարգն» եւ թոյլատրութիւն ստացել յուղարկաւորուելու վանական հաստատութեան մերձակայ գերեզմանոցում[83]։ Մէկ այլ բնագրի համաձայն, նոյն վանքին **Թադէոսի որդի Յոհաննէսը** նուիրաբերել է Գլիձորում գտնուող «զջաղացն ի գլիձորին զմիջի **ակն**»[84]՝ յուղարկաւորուելով վանքի գերեզմանատանը։*

*Միջնադարում եղել է թաղման հարկ, այդ իրողութիւնը հաստատւում է նաեւ Թալինի շրջանի Իրինդ գիւղի կենտրոնում կիսաւեր վիճակում կանգնած ճարտարապետական կարեւոր կոթողներից մէկի՝ VII դ. շրջանաձեւ գմբէթաւոր եկեղեցու հարաւային պատի բնագիրը, որը թէեւ խիստ քայքայուած, եղծուած է, սակայն փաստում է, որ ոմն իշխան Նանիսեն կամ (Ջաչիսեն) իր տիրոյթում զիջել է **գերեզմանի շարիատ** հարկը։ Անուանի վիմագրագէտ Ս. Բարխուդարեանն արձանագրութեան թուականը վերծանել է ։**ՁԼԵ**։ (1286) է[85]։*

Անփոփելով վերոնշեալ վիմական վաւերագրերի տեղեկութիւնները, կարելի է եզրակացնել, որ հոգեւոր հաստատութեանը տրուել են տարբեր բնոյթի հարկեր, ուստի սահմանափակուել, որ եպիսկոպոսական աթոռին տրուել է միայն «յամենայն գեղէ եր-

---

[78] **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 61:

[79] **Կ. Ղաֆադարեան**, Հովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները, էջ 81:

[80] **Հ. Պետրոսեան**, նշ. աշխ. էջ 101:

[81] Դիւան, պրակ IV, էջ 267. **Ս. Աւագեան**, Բառաքննութիւն, էջ 166: Յղումը կատարել ենք Ս. Աւագեանից:

[82] **Ս. Աւագեան**, նշ. աշխ., էջ 55:

[83] Տեղագրութիւնք ի փոքր եւ ի Մեծ Հայս, **Հ. Ներսիսի Սարգսեան**, Վենետիկ,1864, էջ 152:

[84] Նոյն տեղում:

[85] **Ս. Բարխուդարեան**, Սոցիալ-տնտեսական բովանդակութեան արձանագրութիւններ եւ դիտողութիւններ, էջեր հայ ժողովրդի պատմութեան եւ բանասիրութեան, (յօդուածների ժողովածոյ), Երեւան, 1971, էջ 81: Գիտնականի հաւաստմամբ Նանիսէն հոգեւորական չէ եւ բնականաբար նշեալ հարկը տրուել է աշխարհիկ իշխանին:

կու գըրիւ հաց», ինչպէս հաւաստում է Անիի Սբ. Առաքելոց եպիսկոպոսանիստ եկեղեցու բնագիրը, եւ ընդհանրացնել այն, համոզիչ եւ ընդունելի չէ, որովհետեւ թէ՛ Ամբերդի յիշատակագիրը եւ թէ՛ Տաթեւի հարկացուցակը տեղեկացնում են բազմատեսակ պարտոյթների մասին։

ՌՈՒԲԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆՉԻ ՄԱՍԻՆ

Մարդկային միտքը ինչ վերընթաց ալ ունենայ, մէկ է Աւետարաններու մէջ արտացոլուած վեհութենէն եւ քրիստոնէութեան բարոյական մշակոյթէն վեր չի կրնար բարձրանալ։ Բոլոր չորս Աւետարաններն ալ, ըստ իս, անվերապահօրէն արժանահաւատ են, քանի որ ատոնց մէջ երեւան կու գայ Քրիստոսի անձի մեծութեան ցոլքը եւ այնպիսի կերպարանքով, որով միայն Աստուածութիւնը կրնար արտայայտել Անոր երկրի վրայ։ Եթէ ինծի հարցնեն, թէ քո անհատականութիւնը համաձա՞յն է արդեօք Անոր մատուցելու ակնածանք եւ երկրպագութիւն, ես կը պատասխանեմ՝ անպայման։ Ես կը խոնարհիմ Անոր առաջ՝ որպէս բարոյականութեան բարձր սկզբունքի յայտնութեան։

ԵՈՀԱՆ ՈՒՈԼՖԿԱՆԿ ԿԷՕԹԷ

Ոչ ոք երբեք չի կրնար դաստիարակել մարդը։ Մեղաւոր եւ անուղղելի մարդուն կեանքը կարող է փոխել միայն Աստուած՝ պարգեւելով նոր ծնունդ, վերստին ծնունդ։ Վերածնուած մարդուն կը դաստիարակէ ինքը՝ Սուրբ Հոգին։ Այդ է մեծագոյն եւ միակ դպրոցը, ուր կայ մէկ ուսուցիչ եւ մէկ աշակերտ։

ՃՈՆ ԼՈՔ

Ամուր կապերով կապուեցէք Աստուածաշունչի հետ, քանի որ ան ձեր ազատութիւններու գլխաւոր խարիսխն է։ Մեր ճշմարիտ քաղաքակրթութեան գործընթացի համար մենք պարտական ենք այդ գրքին։ Մենք պէտք է Սուրբ Գիրքը համարենք որպէս մեր ղեկավարը այսօր եւ ապագային։

ՈՒԼԻՍ ԳՐԱՆՏ

Ես կը խղճամ անոնց, որոնց համար Աստուածաշունչը ամենօրեայ ընթերցանութեան գիրք չէ։ Չեմ կրնար հասկնալ, թէ ինչու այդ մարդիկ իրենք զիրենց կը զրկեն զօրութենէ եւ ուրախութենէ։

ՎՈՒԴՐՈ ՈՒԻԼՍՈՆ